ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-ք. Արմավիր-- «10» -դեկտեմբերի- 20 21թ.
(կնքման վայրը)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության
-Արմավիրի- տարածքային կենտրոնը (այսուհետ՝ Տարածքային կենտրոն),
(տարածքային կենտրոնի անվանումը)

ի դեմս տնօրեն **Սիմոն Թովմասյան**- ի, որը գործում է կանոնադրության--
(ազգանունը, անունը) (կանոնադրության կամ լիազորագրի)

հիման վրա, մի կողմից, **Սաթիկ Ղազարյան ԱՁ, 06.07.2017թ.,83.965819**

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, պետական գրանցման օրը, ամիսը, տարին, պետական գրանցման վկայականի համարը, կամ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործատուի անունը, հաշվառման վայրը)

այսուհետ՝ Գործատու, ի դեմս **անհատ ձեռներեց Սաթիկ Ղազարյանի**

(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

որը գործում է --կանոնադրության - հիման վրա, մյուս կողմից և
(կանոնադրության կամ լիազորագրի կամ այլնի)

--Սուրեն Ստեփանյան, ՀՀ անձնագիր AP 0343190, սոց. քարտ 4101980055, 27.12.2014թ., ք. Արմավիր Զիվանու 13շ. 29բն.,

(հարմար աշխատանքի ընդունման ենթակա անմրցունակ անձի ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տրման օրը, ամիսը, տարին (կամ հանրային ծառայությունների համարանիշը), հաշվառման վայրը, իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև ներկայացուցչի անունը, ազգանունը, լիազորագրի տրման օրը, ամիսը, տարին)

այսուհետ՝ Շահառու, մյուս կողմից (Պայմանագրի բոլոր կողմերը միասին համատեղ հիշատակման դեպքում այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:
(նախաբանը լրաց. 08.10.18 N 108-Ն)

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան Գործատուի կողմից Շահառուին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցումն է Տարածքային կենտրոնի կողմից Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման համար, ինչպես նաև տեսողությունից կամ տեղաշարժման (հաշմանդամի սայլակով տեղաշարժվող) խնդիրներով առաջին խմբի հաշմանդամություն ունեցող (այսուհետ՝ ուղեկցողի կարիք ունեցող) Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման դեպքում՝ ուղեկցողի կարիք ունեցող Շահառուին ուղեկցողի համար աշխատավարձի մասնակի փոխհատուցումը Պայմանագրով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում:

2. Պայմանագրի համաձայն

1) Գործատուն պարտավորվում է Շահառուին ընդունել աշխատանքի, իսկ Շահառուն ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ Պայմանագրով սահմանված ժամկետով,

2) Տարածքային կենտրոնը պարտավորվում է Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում Գործատուին տրամադրել աշխատավարձի մասնակի փոխհատուցում, ինչպես նաև Պայմանագրով սահմանված դեպքում ուղեկցողի կարիք ունեցող Շահառուին ուղեկցող ունենալու համար՝ դրամական օգնություն:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության Գործատուին և Շահառուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման դեպքում Գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև ուղեկցողի կարիք ունեցող Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման դեպքում՝ Շահառուին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Գործատուին տրամադրել Գործատուի կողմից Շահառուին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցում, իսկ ուղեկցողի կարիք ունեցող և Պայմանագրի 12-րդ կետում նշված Շահառուին տրամադրել ուղեկցողի համար դրամական օգնություն՝ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան,

3) չմիջամտել Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

4) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում մուտքագրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 14-րդ և 16-րդ կետերով սահմանված տվյալները,

5) չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի և Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Շահառուից և Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունները հաստատել Պայմանագիրը կնքելուց հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում,

2) պահանջել Գործատուից Շահառուի հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց կամ Շահառուին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտը (այսուհետ՝ աշխատանքային պայմանագիր) ստորագրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով (տեղեկատվական շտեմարանի կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության պաշտոնական կայքէջի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) այդ մասին ծանուցել Տարածքային կենտրոնին,

3) պահանջել Շահառուից սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագրի պատճենը ներկայացնել Տարածքային կենտրոն՝ այն կնքվելուց (ընդունվելուց) հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գործատուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Գործատուին ու Շահառուին վճարված գումարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքերում,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Գործատուին ու Շահառուին վճարված գումարը, եթե՝

ա. սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Շահառուի նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերում,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31.1-րդ կետում նշված այլ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է,

գ. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ դեպքերում,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուից և Գործատուից պահանջել հավասարապես վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված գումարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում,

7) ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածով սահմանված դեպքերում դադարեցնել աշխատավարձերի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև դրամական օգնության տրամադրումը,

8) յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը Գործատուից ստանալ սահմանված ձևին համապատասխան տեղեկանք՝ Գործատուի մոտ հաշվետու ամսվա ընթացքում իր մոտ աշխատող Շահառուների մասին,

9) ըստ անհրաժեշտության Գործատուից և Շահառուից ստանալ Գործատուի մոտ Շահառուի աշխատելու փաստը հավաստող տեղեկություններ և փաստաթղթեր, իսկ ուղեկցողի կարիք ունեցող Շահառուից՝ ուղեկցողի առկայությունը (աշխատելու հանգամանքը) հիմնավորող փաստաթղթեր,

10) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

(4-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն, խմբ. 11.05.17 N 74-Ն)

5. Գործատուն պարտավորվում է՝

1) Շահառուի հետ համաձայնեցված ժամկետում, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի հիման վրա Շահառուին ընդունել աշխատանքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

2) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում, Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ, աշխատանքային ունակությունների և կարողությունների զարգացմանը նպաստող անհրաժեշտ միջավայր,

3) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

4) Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը կնքելուց (ընդունելուց) հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով (տեղեկատվական շտեմարանի կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության պաշտոնական կայքէջի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) այդ մասին ծանուցել Տարածքային կենտրոնին,

5) յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը Տարածքային կենտրոն ներկայացնել սահմանված ձևին համապատասխան տեղեկանք՝ հաշվետու ամսվա ընթացքում իր մոտ աշխատող Շահառուների մասին, ինչպես նաև Պայմանագրի 4-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված՝ Շահառուի աշխատելու փաստը հավաստող տեղեկություններ և փաստաթղթեր՝ Տարածքային կենտրոնի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում,

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջները չպահպանելով Շահառուին աշխատանքից ազատելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

7) *(ենթակետն ուժը կորցրել է 15.01.16 N 2-Ն)*

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին ու Շահառուին վճարված գումարը՝

ա. ամբողջությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքերում,

բ. մասնակի (հիսուն տոկոսի չափով)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում,

գ. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ դեպքերում:

(5-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն, խմբ. 11.05.17 N 74-Ն)

6. Գործատուն իրավունք ունի՝

1) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման դեպքում Գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում տրամադրելուն առնչվող հարցերի,

դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) պահանջել Տարածքային կենտրոնից չմիջամտելու Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

3) Պայմանագրի 9-րդ կետի 1-ին ենթակետով և 10-րդ կետով սահմանված չափով, կարգով, ժամկետում և՝ պայմաններին համապատասխան, Տարածքային կենտրոնից ստանալ Շահառուին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցում,

4) պահանջել Շահառուից ոչ ուշ, քան Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

5) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

7. Շահառուն պարտավորվում է.

1) Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Գործատուին ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

2) Գործատուի հետ համաձայնեցված ժամկետում Գործատուի մոտ ընդունվել աշխատանքի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

3) Տարածքային կենտրոն ներկայացնել Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված, ինչպես նաև այլ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենը՝ այն կնքվելուց (ընդունվելուց) հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,

4) Տարածքային կենտրոն ներկայացնել Պայմանագրի 4-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված՝ Գործատուի մոտ Շահառուի աշխատելու փաստը հավաստող տեղեկություններ և փաստաթղթեր՝ Տարածքային կենտրոնի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջները չպահպանելով աշխատանքից ազատվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին ու Շահառուին վճարված գումարը՝

ա. ամբողջությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերում, այլ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ դեպքերում,

բ. մասնակի (հիսուն տոկոսի չափով)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 31-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում,

7) ուղեկցողի կարիք ունենալու և ուղեկցողի համար դրամական օգնություն ստանալու դեպքում՝

ա. Տարածքային կենտրոն ներկայացնել ուղեկցողի առկայությունը (աշխատելու հանգամանքը) հիմնավորող փաստաթղթեր՝ Տարածքային կենտրոնի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում,

բ. Պայմանագիրը կնքելուց հետո եռօրյա ժամկետում Տարածքային կենտրոն ներկայացնել հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին:

(7-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն, խմբ. 11.05.17 N 74-Ն)

8. Շահառուն իրավունք ունի.

1) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող

և Պայմանագրով սահմանված Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման դեպքում Գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև ուղեկցողի կարիք ունեցող Շահառուին հարմար աշխատանքի տեղավորման դեպքում՝ ուղեկցողի համար տրամադրվող դրամական օգնությանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Տարածքային կենտրոնից պահանջել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում մուտքագրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 16-րդ կետով սահմանված տվյալները,

3) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

4) ուղեկցողի կարիք ունենալու դեպքում, Պայմանագրի 9-րդ կետի 2-րդ ենթակետով և 10-րդ կետով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան, Տարածքային կենտրոնից ստանալ ուղեկցողի համար դրամական օգնություն,

5) Գործատուից պահանջել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի հիման վրա Շահառուին ընդունել աշխատանքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

6) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում, Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ, աշխատանքային ունակությունների և կարողությունների զարգացմանը նպաստող անհրաժեշտ միջավայր,

7) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

8) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

(8-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պայմանագրի համաձայն՝

1) Պայմանագրի կողմ հանդիսացող յուրաքանչյուր Շահառուի համար տասներկու օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, Գործատուին վճարվում է փոխհատուցում՝ տվյալ Շահառուի համար սահմանված ամսական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը,

2) ուղեկցողի կարիք ունեցող և Պայմանագրի 12-րդ կետում նշված Շահառուին ուղեկցողի համար տրամադրվում է դրամական օգնություն՝ ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում, ամսական կտրվածքով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

10. Պայմանագրի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված գումարը Գործատուի, իսկ 9-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գումարն ուղեկցողի կարիք ունեցող Շահառուի՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերից մեկում բացված հաշվարկային հաշիվներին է փոխանցվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

11. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Պայմանագրով ուղեկցողի կարիք ունեցող և ուղեկցող ունենալու համար տրամադրվող դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող Շահառու ------առկա է----------

(լրացվում է «առկա է» կամ «առկա չէ»)
ուղեկցողի կարիք ունեցող և ուղեկցող ունենալու համար տրամադրվող դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող Շահառուի առկայության դեպքում, նշվում են ուղեկցողի կարիք ունեցող յուրաքանչյուր Շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տրման օրը, ամիսը, տարին (կամ հանրային ծառայությունների համարանիշը)

13. Գործատուն և Շահառուն Պայմանագրով սահմանված դեպքերում պարտավորվում են Տարածքային Կենտրոնին վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից վճարված գումարը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում:

14. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

15. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ՝

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունքներ,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

19. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

20. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

22. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

23. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

(23-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

24. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 11-րդ և 15.1-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան կամ Գործատուն և (կամ) Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

(24-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

25. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից, որոնցից մեկական օրինակ տրամադրվում է Գործատուին, Շահառուին և Տարածքային կենտրոնին:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
աշխատակազմի գբաղվածության պետական գործակալության
-Արմավիրի տարածքային կենտրոն ----
(Տարածքային կենտրոնի անվանումը)

Գտնվելու վայրը՝ ք. Արմավիր Աբովյան 137/1---
Հեռ. --060652762-
էլ. փոստ. simon.tovmasyan@socservice.am--
Հ/հ -90001102548 4--
Ի դեմս՝ տնօրեն Սիմոն Թովմասյանի-

(տարածքային կենտրոնի ղեկավարման իրավունք ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրություն)

L.S. --- --- դեկտեմբերի - 2021թ.

Գործատու՝
----------Սաթիկ Ղազարյան ԱՁ---
(Գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը՝ -ք. Արմավիր Երևանյան 18շ. բն.29--
Հեռ. -094369900---
էլ. փոստ. --satikghazaryan@mail.ru--
Հ/հ 16009047996700---
ՀՎՀՀ --84152418---

Ի դեմս՝ -- Ղազարյան Սաթիկ ----

(տարածքային կենտրոնի ղեկավարման իրավունք ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրություն)

Կ.Տ. 10 12 2021թ.

Շահառու՝
Սուրեն Ստեփանյան
(ազգանունը, անունը)

Բնակության վայրը՝ -ք. Արմավիր Տիվանու 13շ. 29բն.-
Հեռ. --077063890
էլ. փոստ.
Հմ

(Ներկայացուցչի միջոցով հանձնս գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը)

(Շահառուի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

10 12 2021-թ.